Ավետիք Իսահակյան

Լուռ պարտեզում սրրտատրրոփ, սիրատենչ

Լուռ պարտեզում սրրտատրրոփ, սիրատենչ
Իմ նազելուն սպասում եմ այս գիշեր.
… Շրշուկ ընկավ ահա վարդի, ծաղկանց մեջ.
Ծրփծփացին շուրջս մետաքս զառ փեշեր.
Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց,
Կարոտավառ հպարտ կրծքին փարվեցի.
Ծով – մազերի բույրը անո՛ւշ ծավալվեց,
Աստղ – աչերին համբույրներրս վառեցի.
Շրրթներիցրս ալ – արյունը կաթկաթեց
Եվ բախտավոր, և երջանիկ լացեցի …

- Վա՛յ, քեզ, թրշվառ, ցրնորքների խեղճ տրղա,
Ոչ ո՛ք չունիս, ոչ ո՛ք չրկա՝ քեզ մոտ գա …

1905
Ալեքսանդրապոլ